№ 10 Շաբաթ 19 Մարտի 1883 № 10

ՀԱՅԿ

Խմբագրութեանս ուղարկուած գրութիւնները պէտք է լինին մաքուր գրուած, հեղինակի ստորագրութեամբ ու ճիշդ հասցէով։

—

Գրութիւնները թէ յօդուածները կարող են անխմբագրելի փոփոխութեան, կը վերադարձնին անձամբ պահանջողներին և առանց բացատրութեան։

Տարեկան բաժանորդագրութիւնն է Երևանի մէջ երեք բուրլի, իսկ Երևանից դուրս — ամէն տեղ — չորս բուրլի կանխիկ վճարելի։

—

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։ Երաքանչիւր բառի վճարն է 2 կոպէկ առաջին անգամի տպագրութեան համար։

Հրատարակվում է շաբաթական մի թերթ։ ՁՈՐԳՈՐԴ ՏԱՐԻ Հասցէն՝ Эривань. Въ Редакцію «ՀԱՅԿ»

Ա. Զ Դ

—

Թէև պնօրինած էին Պաուլի ներկայ Լուսաւորիչ պարբերականը կանխիկ սպառնալ, ուստի չը յաջողուեց։ Ուստի անցեալ պարբերքի փոխարէն խըրատ առնել վ. Լուսաւորի մեղ ներողութիւն պարտնոյ, որոնք սորա գրուել են մեր Լեռլիին, բայց չէին վճարած բաժանորդագինը, շտապէն մինչև Մարտի վերջը պարտաճարոյց չինել, հակառակ դէպքում ոչնչանա չէին ուղարկել Պաուլի համարները։

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր մէջ գոյութիւնի վիճակը։ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ. Նամակ խմբագրին։ Նրանի գաղափարը։ Հին—Նախկինանց։ ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ. ՊՐԱՍԱԿԻ ՓՈՇՏԱՐԿՂԸ։ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

Մեզանից անկախ պատճառով այս համարը կէս թերթ է հրատարակվում։

ՄԵՐ ՄԷՋ ԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

—

Քանի որ այս ինչ կամ այն ինչ կազմակերպ մեզանից հետո գործում է տարի նրա գործունէութեան արդասիքի պրոմնաքն համարեա ամենայն օր ուրա- գիալի լսեր մեզանից անդակաս են մ լինում,—մենք էս ի սրտէ ցանկանում ենք և ամեն ջանք ու հնարք դործ ենք դնում, որ այդ անձը ձեռք ձգվի և նրան մեր գործերը զեկուցանելու յանձնենք։

Մեր փափագը կատարվում է. մեր անկացած անձը գալիս է և մրցանում է իր պաշտօնը—բայց ի՞նչ—ուրիշ կամ երեք ամիս չի անցնում, անդանկարծ տեսնում ես, որ այն հաքարկութիւնը, որ քիչ ժամանակ առաջ սրտով փափագում էր, նորից կերպ նշանառում ձեռք բերել այդ անձը, զանազան կուսակցութիւնների է բաժանուած և ամէն մէկը իր ձիրը թափելով աշխատում է նրան մրցակցել, նրան հալածել, նրան իր միջից յուսահատ բարդիր անելու համար։

Ի՞նչ է հատարակութեան մի այսպիսի խակ ու անտիրմն գործառնութեան պատճառը։

—Այն՝ որ մենք ոչ սկիզբը և ոչ վերջը խորին ուշադրութեան առարկայ չենք դարձնում ինչ որ արտով կամենում էինք և ինչ որ յետոյ արտով առում ու արհամարհում ենք։

Բայց ո՞վ է վնասվում հատարակութեան այսպիսի անխոհեմ վարմունքից...

Այս մասին մտածողներ շատ քիչ կան, մեզանից ամէն մէկը աշխատում է իր կիրքը, իր տարերութիւնը առաջ տանել. մեզանից ամէն մէկը մտանում է դործի սրբութիւնը և աչքի տակ է առնում միայն իր անձնուրութիւնը, իր անձնական շահը, նրանից ստացածը իր անձի և ոչ ամբողջ հատարակութեան համար։

Այն մասին, որ հատարակութիւնը իր այսպիսի գիւրաթեք բնութիւնամբ, իր գիւրահաւատութեամբ վնասում միայն իրեն, յետաձգում է միայն իր դործերի առաջ գնալը և նրա հատարակութիւնը առանց ծանր ու թեթև անելու հետևանքը ապագայում, առանց խորը մտածելու ու քննելու իր բայլը, որ անում է, հետացնելով իրենից մի կամ երկու ամիս սրանից առաջ պաշտած անձը, վնասում միայն իրեն, կաշկանդում է ամբողջ մի վարչութիւնում դործող անձինքների ձեռքը, նրա դործերը երեսի վրա են մնում և նոչ նա չի մտածում, նա հատարակութիւնը պէտք է մտածի, որ այսպէս փոխելով փոխանակ մի բայլ առաջ գնալու, տասը քայլ յետ է մրնում և այսպէս ամբողջ օրերով և ամիսներով նրա կենսական խնդիրը լինում է այն, որ նա պարապում է ինտրիգներով միայն։

Ունենալով մեր հատարակական կեանքի երկար տարիների դառը արդասութեան տխուր հետևանքները մեր աչքի առաջ, մենք պատանց խորհուրդ կը տայինք մեր հատարակութեան առաջնորդ մարդիկներին, որ նրանք ընդհանրապէս հատարակական դործերում այս կամ այն պաշտօնէի վերաբերութեամբ լրջորէն ու խոհեմ քննեն, դատեն, վարեն, ապա թէ ոչ, մենք համարեա միշտ մեր գործառնութեանց մէջ սխալուած կը լինինք,—և մեր գործերը համարեա ամբողջ տարիներով առանց մի որ և իցէ արդիւնքի երեսի վրա ընկած մնացած կը լինին...

Դ. Գ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երևան.

Ի նպաստ Հոխիսիանի և Գոյիանեանի օրիորդական դպրոցների և Երևանայ Գիմնազիստների հաշակերտների անցեալ Փետրվարի 22-ին կայացած պարահանդէսից դրամագլուխ է՝

ա. անդամների ծախսուելուց — — — 399 ռ. » կ.

բ. Գազարից — 251 ռ. 20 »

գ. բազարից մնացած քաղցրաւէնների ծախսուելուց — 16 » 50

Ընդամենը մնում եղել է 666 ռ. 70 կոպ.

Ծախս եղել է՝

թիւնների տպագրութեան 6 ռ. 50 կոպ.

բ. Նուագածուներին և սաղանդարներին 30 ռ.

գ. դահլիճը տաքացնելու և լուսաւորելու համար և ծառաներին վարձ 23 ռ.

դ. Ուտելիքին 2 ռ. կոպ.

ե. բազարի համար կարևոր քաղցրաւէնների 27 ռ. 91 կոպ.

Ընդամենը ծախք եղել է 89 ռ. 41 կոպ.

Որևէն պարահանդէսից զուտ արդիւնք դրացել է 557 ռ. 29 կ. որ և հաւատարակս բաժանուած է երեք վերոյիշեալ դպրոցների մէջ։

Իւլիա Ժուկովսկայայ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԴԱՌՈՒՄ

—

Անցեալ Փետրուարի 23-ին Խորհրդարանի նստում վճռուեց ի միջի այլոց և այն հարցը, թէ մեր քաղաքն ի՞նչպէս է մտադիր պատուելու Նոցին Կայսերական Մեծութեանց՝ Կայսրի և Կայսրուհու Թագադրութեան օրը, որ՝ բարձրագոյն մանիֆեստի համաձայն՝ նշանակուած է Մայիս ամսին։

Գարան Քաղաքապետը, խորհրդարանի առանձին ուշադրութիւնը դարձնելով այս հարցի վրա, առաջարկում էր թագադրութեան օրը ներկայացնել Կայսրին մի այնպիսի պատշաճաւոր ընծայ, որ պատիւ բերէր մեր քաղաքի տնտեսութեանը և մի և նոյն ժամանակ բիչ թէ շատ գեղեցիկ զարդ լինէր թանգարանին։ Զը նայելով այս առաջարկութեանը, շատերը ձայնաւորներից կարծում էին թէ բաւական է ընծայի պատրաստութեան համար 600 800 մանէթը։ Այնու ամենայնիւ ծախքի նշանակելը մնաց նոյնպէս, որովհետև յայտնի չէր թէ ինչ ձևի և որակութեան է լինելու ընծայը։ Այս պատճառով որոշուեցաւ դրել Մոսկուայ գործարանատէր—արծաթագործներին, որ ցոյց տան օրինակներ և յայտնեն նրանց ամէն մինի գինը։

Ձայնաւոր պարոն Տէր—Սարգսեանցը այս իսկ նստում զարթեցրեց, և մի այլ հարց տուեց, որ կապ ունէր թագադրութիւնը շքեղ պատուելու հարցի հետ։ Պարոնը այն կարծիքը, յայտնեց թէ որովհետև մեր քաղաքս գլուխը մանիֆեստի համաձայն պէտք հարկաւոր է նրան ճանապարհածախք նշանակել քաղաքային գանձարանից։ Ձայնաւոր պ. Մ. Աղամալեանցը, պատասխանելով այդ առաջարկութեանը, հաւատացած է, որ Կառավարութիւնն այդ մասին հոգացողութիւն է արած և հէնց այդ պատճառով նա աւելորդ է համարում քաղաքապետին ճանապարհածախք նշանակելը։ Պ. Տէր—Սարգսեանցն այնու ամենայնիւ կարծում է, որ ճանապարհածախքն անհրաժեշտ է, որովհետև թագադրութեան ներկայութեան մասին դրած թ. Նահանգապետի առաջարկութեան մէջ այդ մասին ոչինչ չէ գրուած։ այն ինչ յայտնի է, որ Կառավարութիւնը՝ ծառայողին պաշտօնով մի որ և իցէ տեղ ուղարկելիս, տալիս է նրան և հարկաւոր ճանապարհածախքը։ Վիճաբանութիւնը աւելի ձգձգուեց. մէկը առաջարկում էր տալ 500, միւսը 600, երրորդը մի փոքր պակաս կամ աւելի։ Մինչև անգամ նոյն ձայնաւոր պ. Աղամալեանցը կարծում էր, որ եթէ Կառավարութիւնից ծախք էլ չը նշանակուի այս բանի համար, թող քաղաքացիքս իրենց գնայ. վերադառնալուց յետոյ քաղաքը նրանից հաշիւ կարող է պահանջել և վճարել տրած ծախքերը իր գանձարանից։ Վերջապէս Վարչութեան անդամ պ. Պարգաջանեանցը իրաւունք խնդրեց խօսելու։ Նրա միտքը կարելի է ամփոփել հետևեալ մի քանի խօսքերով։ Մեր քաղաքացիքս ներկայացնելու է Թագադրութեանը իրև

Երևանի ժողովրդի ներկայացուցիչ։ Այդ պատճառով մեր քաղաքի պարտուզը, քաղաքային արժանավորութիւնը բարձր պահելու համար անհրաժեշտ է ճանապարհածախք նշանակել և ոչ թէ 500–600, այլ գոնէ այնուազը 1000–1500 մինթ. պէսք է դիտենաց, որ քաղաքացիները տեսակցելու է Ռուսաստանի այլ նահանգական քաղաքների ներկայացուցիչների հետ, ներկայանալու է Պայսերը, իբրև քաղաքի հոգեկան ուրախ զգացմունքներն արտայայտող այդ նշանաւոր օրուայ—թագադրութեան առիթով։ բայց ո՞չ թէ այն հագուստով, որով տեսանում ենք մենք այժմ նրան. այլ հանդիսին պատշաճ և փայլ ձևով։ Թող պ. ղ. ձայնատուները այս հարցի մասին վիճելիս, մտածելին հէնց այն հանգամանքը, որ մեր քաղաքացիները դեռ անցեալ տարի յաջողեցրեց Երևանի 24 հազար մանէթ օժանդակութիւն ըստանալու զեմստվոյի փոդերից։ Մինթ փայլ է մեզ ափսոսել մի 1000–1500 մանէթը, որ այդ գումարի 1/40 հուսկ. է կազմելու։ Պարոնի այսահեղ բերած խօսքերը համոզիչ էին և ուշագրութեան արժանի։ Խորհրդարանը պրոշեց տալ քաղաքացիներին հազար մանէթ ճանապարհածախք։

Հարկաւոր է յիշել այստեղ, որ դեռ ևս անցեալ թուականի Օգոստոսի 21-ին թագադրութեան հանդէսը դանը հուսահալ վճիռն էր կայացրել։ Խորհրդանի դահլիճում մաղթանք կատարել, խնդրելով Ամենաբարձրեալից երկարակեցութիւն Նոցին Կայսերական Մեծութեանց և առ հասարակ կայսերական տունի համար։ Ի յուսաւորել քաղաքը ամենաշքեղ կերպով։ Գ. Նոցին Կայսերական Մեծութեանց ուղերձ ուղարկել Երևանի կողմից։ Դ. այդ արքունական օրը մի բարի գործով նշանաւորացնել։ Երևանի ազքատ դասակարգից վերցնելով քաղաքին հասանելի տարուայ եկամուտը 5000 մանէթի որքանութեամբ։ Վերջին նիստում որի նկարագրութիւնը բերուեցաւ այս տեղ, Խորհրդարանի վճիռը ընդարձակուեց նրանով, որ քաղաքը պատրաստում մի ընծայ—մատուցարան և ազամանի, երկուսն էլ ոսկուց շինած և երկրորդ՝ մատաղվում է գեղեցիկ ձաշ պատրաստել հասարակական զբոսարանում և դրա համար թագադրութեան մեծ օրերում առանձին յանձնաժողով կը կազմուի նախապատրաստութիւններ տեսնելու համար։

* * *

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ

—

Մեզանում օրուայ հարցը՝ բազարգալսի (դէպուտատի) հարցն է։ Սա երկու ամիս շարունակ Առաջ ընտրուեց Պ. Ս.։ Նրա հակառակորդ և նոր նոր նոր նոր խաղ խաղացին։ Ապա ընտրուեց պ.—Հ. խոկվաց անուանելի էր Պ. Ս. ին։ Նոր գանգատներից հետոյ դեպ ի գերազանց իշխանութիւնը։ Իսկ այժմ ոչ այս և ոչ այն՝ այլ մի փոխ պատգամաւոր ունենք...։

Վաղուայ հարցը ջրի հարցն է. բանի օրից նոր ջրպետ պիտի ընտրենք։ Հրամայեցին թէ հին դարերից ինչուայն ջրաբաշխութեան սովորութիւնը և կանոնները են անփոփոխ և հաստատ պահվում մեզանում։ երբ ամենքիս ժամանակի պահանջի համաձայն փոխուած է. ինչ կնշանակի մի քաղաք իր քսան և հինգ գիւղերովը ջրելու համար յանձնել մի մարդու... և այն ինչ՞ նշանակ մարդու—կամայականութեանը՝ և դրան հարս ամուսայ համար 800 ր. վարձ տալ՝ բայի կոշնակներից։

Որքա՞ն ծիծաղելի և ստոր միջոցներով է լինում այդ ընտրութիւնը. քանի ջրպետը պիտի դեռ ընտրուի՝ իր հերթովը պիտի ըստ կարգին ստան և հրան պէնոյ, իսկ երբ արդէն իր ջրպետական զինեթի վրա է կանգնած (յուլիս. օգոստոսին)՝ այդ ժամանակը փոխադարձաբար ամենքը պիտի նրան պէնոն, որ ջուր ստանան։ Բայց ներէ՞ ջուր չը կա՞...։ Հոգ չէ, այնու ամենայնիւ պիտի տանալ. երևի ջրպետը կ'ստեղծէ։

Հինգ հինգ շինում—և ոմի է շինողը. սովորական խօսք է դարձել—Բազարչայից պիտի հանել, շատ բարի—բայց մինչ օրս՝ ոչ թէ մի երկրաչափ՝ այլ մի հասարակ սմն էլ աչքի տակովը չէ անցկացրել այն փոքրը՝ ուստի ջրանցքը պիտի շինուի և չէ քննել և հաշուել՝ թէ ի՞նչպէս և ո՞րքանով պիտ շինուի։

Ճշմարիտ հէնց նոյն և այդ տեղումը ահա տասը տարի է, որ Ճանապարհ շինելու պատճառաւ շատ և շատ մարդիկ են անց ու դարձ անում և մեր գաւառը շատ անգամ քրանից և բրանեցրեց այդ տեղերն քումը իր մշակներին. գանվում են այն տեղ բարեխիղճ գործավարներ և կապալառու և վաշխառու պ. պ. ներ։ Բայց այդ ամենը ճանապարհի համար է և ոչ ջրի։ Ջրի համար դեռ ժամանակ մի երկու յարմարաւոր տեղ ունենք (ՀՀ՝ *) շինելու և մեր յոյսը դրա վրա է։ Այս մասին արժէ՝ որ միւս անգամ ու երկար խօսենք։

Մանր ձեռը իր ստոր ցեղ ձեռքը կամաց կամաց քաշում է մեզանից բաւական տանջելուց յետոյ։ Ցուսա-

(*) Մի լեզ էլ ունինք արդէն „Զանգի գետ" կոչուած։ Այդ մեր իսկ արժանաւոր Շանգերէյ գաւառապետի շնորհն է, որ պիտի ապաշնորհութեամբ միշտ վայելի նախիջևանը։ առանց հեռանալու այդպիսի դրական օրինակի։ Նոյն անձի աշխատութեամբը և քաղաքի համար շինուած լեզը աւերակ է դարձել արդէն։

լի է՝ որ լաւ գործուն և ամուսն ուսենենք լաւ պատաբերութեամբ։

Մեր՝ ոչ տեղական այլ օտարական բարի երիտասարդութեան երիտասարդները կամեցան մի թատրոնական ներկայացում տալ։ Տարաբաղտաբար այն էլ չ'յաջողեց որպէս և չեն յաջողում ամեն բարի բանները մեզանում։

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ըստ նայելով որ Պատկի տարեվերջաբը Երևանի համար 4 ր. իսկ Երևանից դուրս ստորագրողների համար 5 ր.է։ բայց մենք այս տարի 1 ր. պակասցնում ենք նուիրելով այն մեր բաժանորդներին։

* * *

Պատկի անցեալ համարի առաջնորդող յոդուածի մէջ մի բանի տպագրական վրիպակներ են ներս մտել—առաջին երեսի երկրորդ սիւնակում՝ ազգերի փոխանակ ազգերի։ Նոյն երեսի երրորդ սիւնակում հայերի։ պէսք։ փոխանակ հայերի պէսք։ ամերի փոխանակ ամպի։ ընաւ չէ կարելի մի քայլ էլ առաջ գնալ փոխանակ ընաւ չեն կարող մի քայլ էլ առաջ գնալ։ երկրորդ երեսի առաջին սիւնակում փոխարինութիւն փոխանակ փոխարինութիւն և այլն։

* * *

Պ.—Նշում է Դիմաբարի Խրիմեանի խմբագրութեամբ հրատարակվող «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ» վերնագրով առողջապահական տետրակներից՝ ՊԱՏՈՒԱՍՏ ԵՒ ԻՒՐ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆ ու ԱԿՈՒԱՑՔ ԵՒ ՋԱՆՈՆՔ ՍՈՎՈՂՋ ՊԱՀԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ։ Յանկացողները բաժանորդ գրուել կարող են դիմել Պատկի Խմբագրատունը։ Հրատարակվում է ամիսը մի տետրակ։ բաժանորդագրութիւնը վեցամսեայ է։

* * *

Հնարհակարութեամբ ստացանք Մոսկուայում ընկերութեան հրատարակած «ՀՐԱՀԱՆԳ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՑ» վերնագրով գաղտնիքը։

* * *

Հնարհակարութեամբ ստացանք պ. Զաքարիա Գրիգորեանցի յօրինած «Ուսուցիչ Ուսուցչի» վերնագրով դասագիրքը։ Զեռնարկը բաղկացած է 48 երեսից—մի տարուայ դասընթացի համար նախատեսուած։ Գրքի սկզբում կան և Ուսերէն դեղագրութեան օրինակներ։ Տպագրուած է Տփխիսում Կրամաբլենկոյի տպարանում։ Գինն է 20 կոպ. ծախվում է Զ. Գրիգորեանցի Կովկասեան դրավաճառանոցում։

ՊԱՏԱԿԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ

Կ.-ՊՕԼԻՍ. Խմբագրութեան Ուսաստան Մանկանց հանդիսի։ Զեզ արդէն գրել էինք որ բարեհաճիք Ձեր հանդիսի մի օրինակը ուղարկել Երևան, պարոն Թադէոս Տէրոյեանի անունով։ բայց մինչև այսօր դեռ չէ ստացուել։ Ուստի կարծելով որ նամակը կարող է ձեզ հասած չը լինել, այժմ կրկնում ենք մի և նոյնը։

Խմբագիր հրատարակիչ
ՎԱՍԱԿ ՊԱՊԱՋԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

ԱՄՍԵԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Առողջապահական, դաստիարակական բարոյական և գիտական վերաբերեալ յօդուածների թէ թարգմանուած և թէ ինքնուրոյն։

Տարեկան հատորների թիւը պիտի լինին 12 և պիտի բաղկանան 600—800 երեսներից։ Բաժանորդագրութիւնը վեցամսեայ է և ընդունում է 1882 թ. յունիս ամսից։ գինն է 5 ղրուշ. գաւառները 6 ղրուշ (1 ր. 20 կ.)։

Բաժանորդ դրուել ցանկացողները կարող են դիմել Պատկի խմբագրատունը, ուր ընդունում է Մատենադարան Ժողովրդական հրատարակութեան ստորագրութիւնը։ Կարելի է հրատարակչի և խմբագրողի դիմել այս հասցէով Docteur M. P. Utudjian. Koum—Kabou. Hissar—Dibi № 109 Constantinople.

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Օ. Մանդ.

Դաղրեոյ բիշ կոչոն ճեմարանի աշ. կեր. բիշ։ Մալբէբէի կոյսերական հիւանդանոցի ԴՈՐԻՏՈՐ ԻՒԹԻՃԵԱՆ։

Նոր-Նախիջևանի և Բ. ազարակի թեմական դպրոցի տեսչական պաշտօնը թափուր մնալով Պ. Ա. Բ. Հաթրեանի մահուամբը, նոյն դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է ցանկացողներին՝ յայտնել հոգաբարձութեան իրանց յօժարութիւնը յայտնելով այդ պաշտօնը։

Դպրոցի տեսչի պարտականութիւններն են, իբրև նրա մերձաւոր կատարողը՝ հսկել և պահպանել լինել ներքին բարեկարգութեան յաջողութեան նորին ընտանեաց մնացեալ (կանոնագիր գլ. յօդուած 29)։

Դպրոցի տեսուչն ընտրվում է յուսանելական և արժանաւոր եկեղեցականաց կամ աշխարհականաց աւարտելոց ընթացս ուսման ի ճեմարանս մեր Ակնոյ ս. Էջմիածնի կամ բարձրագոյն ուսումնարանս տեսութեան (յօդուած 30)։

Տեսչութեան համար թոշակ սահմանուած է տարեկան 1800 ռուբլի բացի բնակարանէն և վառելեաց, և մեր ստարկայի ուսուցչութեան ռոճկէն, որ ունի սահմանաւոր սահմանում ըստ թուոյ դասուցի (յօդուած. 3

Դպրոցի այլ կանոնաց և դրութեան ծանօթանալ ցանկացողներին կը յուղարկուի նրա տպագիր կանոնագրութիւնը։

Նախագահ խորհրդոյ հոգաբարձուաց Սուքիաս Եպիսկոպոս։